

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2011 Թ. ՄԱՐՏԻ 31-Ի ՆԻՍՏՈՒՄ

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
(2011-2012 թթ.)

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

• Կոռուպցիան վստահված իշխանության չարաշահումն է՝ անձնական շահ ստանալու նպատակով (*Թրանսփարենսի ինթերնեշնլ*):

• Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է (*«Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիր»*):

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված է ապահովել կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի շարունակական բացահայտումն ու կանխարգելումը և իրականացնել բացահայտման, համակարգերի կառավարման, մասնակցության և այլ հետազոտություններ:

Հայաստանի Հանրապետությունում տարածված կոռուպցիայի հիմնական տեսակներից կրթության ոլորտում հաճախ կարելի է հանդիպել, այսպես կոչված, վարչական կոռուպցիայի տարբեր դրսևորումների, երբ խախտվում կամ վերապահորեն են կիրարկվում գործող իրավական նորմերը: Միաժամանակ առկա են նաև գործառնական կոռուպցիայի դրսևորումներ, երբ գործընթացներն ու պաշտոնական ընթացակարգերը արագացվում կամ դանդաղեցվում են կամ կիրառվում են կամայականորեն:

Երևանի պետական համալսարանում առկա կոռուպցիոն ռիսկերը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ չորս հիմնական խմբերի.

I խումբ. Ընդունելություն

- ✓ Պետական բուհերի ընդունելության գործընթաց:
- ✓ Մագիստրատուրայի ընդունելության քննություններ:
- ✓ Ասպիրանտուրայի ընդունելություն (այդ թվում՝ տեղերի հատկացման գործընթաց):
- ✓ Հեռակա ուսուցման համակարգում և երկրորդ մասնագիտությամբ սովորողների ընդունելություն:
- ✓ Արտասահմանյան քաղաքացիների ընդունելություն:

II խումբ. Ընդհատված կրթության և կրթության շարունակականության հետ կապված խնդիրներ

- ✓ Ներբուհական տեղափոխություններ:
- ✓ Բուհից բուհ տեղափոխություններ, այդ թվում՝ արտերկրից:
- ✓ Փոխանակման ծրագրերով արտասահման մեկնող ուսանողների ընտրություն:

III խումբ. Աշխատանքային հարաբերություններ

- ✓ Աշխատանքի ընդունում (պրոֆեսորադասախոսական կազմ և այլ աշխատակիցներ):
- ✓ Պաշտոնեական առաջխաղացում, ղեկավար պաշտոնների նշանակում կամ մրցույթ (ղեկան, ամբիոնի վարիչ և այլն):
- ✓ Վարչական ազդեցություն (դասախոսի կողմից որոշ բացթողումների և թերությունների նկատմամբ վարչական միջոցների կիրառման, պարզևատրումների, աշխատավարձի հավելման և այլ հարցերի նկատմամբ կամայական մոտեցում):
- ✓ Մասնագիտական աճ (գիտական աստիճան, կոչումներ), վերապատրաստում արտերկրում:
- ✓ Գործուղումներ:

IV խումբ. Տնտեսական գործունեություն

- ✓ Գնումների գործընթաց:
- ✓ Շինարարություն:
- ✓ Տնտեսական և ուսումնաօժանդակ ծառայությունների շահագործում (արհեստանոցներ, ավտոպարկ, ուսումնաարտադրական բազաներ, հյուրերի տուն և այլն):

Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը պահանջում է տարբեր արդյունավետ ծրագրերի համաժամանակյա իրականացում և համալսարանի կոլեկտիվի բոլոր անդամների կողմից խնդրի կարևորության գիտակցում և համագործակցություն:

Երևանի պետական համալսարանը կոռուպցիոն երևույթների դեմ արդյունավետ պայքար իրականացնելու նպատակով նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումների համալիր ծրագիրը.

No.	ՆՊԱՏԱԿԸ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
1.	Համալսարանականների շրջանում ձևավորել կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտ, որը կնպաստի առկա մի շարք խնդիրների հանդեպ անտարբերության վերացմանը և կխթանի ուսանողների ու դասախոսների ակտիվությունը հակակոռուպցիոն պայքարում:	<ul style="list-style-type: none"> - Սեմինարների, հանդիպումների, քննարկումների կազմակերպում և անցկացում: - Առանձին ստորաբաժանումների խնդիրների քննարկում համալսարանի գիտական խորհրդում: - Լավագույն (ոչ ռիսկային) և վատագույն (ռիսկային) օրինակների քննարկում: 	<ul style="list-style-type: none"> - Ուսանողների շրջանում գիտելիքի արժևորում և նրանց մեջ «կոռուպցիոն ճանապարհով գնահատական վաստակելու» երևույթի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքի դրսևորում: - Պրոֆեսորադասախոսական կազմի և մյուս աշխատողների մեջ կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում: 	<p>2011-2012 թթ.</p> <p>ԵՊՀ ռեկտորատ,</p> <p>ԵՊՀ ՈԻՄ,</p> <p>ԵՊՀ ՈԻԳԸ,</p> <p>ԵՊՀ արհկոմիտե,</p> <p>ԵՊՀ ֆակուլտետների դեկանատներ, ամբիոններ:</p>
2.	Առավելագույնս կանոնակարգել կրթական գործընթացները:	<ul style="list-style-type: none"> - Կրթական գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի ընդունման գործընթացի շարունակում: - Ընդունված ներքին իրավական ակտերի կիրառման արդյունավետության և բացահայտված թերությունների մշտական մոնիթորինգ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդներում: 	ԵՊՀ կրթական գործընթացներն առավել թափանցիկ, հրապարակային ու մշակված դարձնելը:	<p>2011-2012 թթ.</p> <p>ԵՊՀ ռեկտորատ,</p> <p>ԵՊՀ ֆակուլտետների դեկանատներ, ամբիոններ:</p>
3.	Ապահովել կրթական ծառայությունների մատչելիությունը և բարձր որակը:	- Կրթական ծրագրերի բովանդակության, առարկայական ծրագրերի, հարցաշարերի, գրականության և տեղեկատվական այլ նյութերի	Ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան ուսանողակենտրոն կրթական ձևերի համակարգի ստեղծում:	<p>2011-2012 թթ.</p> <p>ԵՊՀ ռեկտորատ,</p> <p>ֆակուլտետներ:</p>

		<p>հրապարակում: -Ուսումնական գրականության որակի և հրատարակման նկատմամբ վերահսկողության ուժեղացում: - Համալսարանի բոլոր ուսանողներին և դասախոսներին էլեկտրոնային հասցեների հատկացում և դրանց օգտագործումը ուսանող-դասախոսերկողմ շփումներում (ինքնուրույն աշխատանքի հանձնարարությունների և ուսումնական լրացուցիչ նյութերի առաքում և ստացում, գնահատման արդյունքների մասին իրազեկում և այլն):</p>		
4.	<p>Ձևավորել համալսարանական ընդհանուր դրական մթնոլորտ, համալսարանի առջև ծառայած խնդիրների նկատմամբ միասնական մոտեցումներ և համալսարանական ընդհանուր շահի գիտակցում:</p>	<p>- Դասախոս-ուսանող երկխոսությանն ուղղված միջոցառումների անցկացում (հանդիպումներ, խորհրդակցություններ, բարոյահոգեբանական և բարոյագիտական թեմաներով տեղեկատվության տարածում):</p>	<p>Բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծում և դասախոս-ուսանող գործընկերային փոխհարաբերությունների մշակույթի ձևավորում:</p>	<p>2011-2012 թթ. ԵՊՀ աշխատողներ և սովորողներ:</p>
5.	<p>Ապահովել քննական գործընթացների թափանցիկությունը:</p>	<p>- Քննական գործընթացների մասին միջոցառումների և արդյունքների հրապարակում համալսարանի համացանցային կայքէջում, ֆակուլտետների</p>	<p>Կրթական գործընթացի թափանցիկության ապահովում և ուսանողության շրջանում վստահության մակարդակի բարձրացում:</p>	<p>2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ ֆակուլտետներ, ԵՊՀ ՈՒԽ:</p>

		<p>հայտարարությունների տախտակների վրա և այդ արդյունքների վերլուծություն:</p> <p>- Ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման, ներառյալ վերանայման և բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ չափանիշների, կանոնակարգերի և ընթացակարգերի ստեղծում և հետևողական կիրառում, դրանց վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացում, ինչպես նաև ուսումնական գործընթացի վերահսկելիություն:</p>		
6.	Ներդնել ասպիրանտուրայի ընդունելության, տեղերի բաշխման արդարացի, արդյունավետ և թափանցիկ մեխանիզմներ:	- Ասպիրանտական տեղերի բաշխման հարցի պարտադիր քննարկում ամբիոններում, ֆակուլտետների գիտական խորհուրդներում, ԵՊՀ ռեկտորատում:	Ասպիրանտուրայի ընդունելության գործընթացի թափանցիկության ապահովում:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ ֆակուլտետներ:
7.	Ներդնել ասպիրանտների ատեստավորման արդյունավետ մեխանիզմներ:	- Ասպիրանտուրայի ընդունելության քննությունների անցկացման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում:	Գիտամանկավարժական բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ ֆակուլտետներ:
8.	Կանոնակարգել դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական	- Ուսանողական հարցումների արդյունքների քննարկման և կիրարկման գործուն	Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունավետ գործընթացի	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ ՈՒԽ,

	հարցումների իրականացման գործընթացը:	մեխանիզմների ներդրում: - ԵՊՀ-ում ստացած իրենց կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատում: - Ուսուցման տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատման չափանիշների մշակում և շրջանավարտների ամենամյա հարցումների գործընթացի կատարելագործում:	ապահովում:	ԵՊՀ արհկոմիտե:
9.	Հստակեցնել տեղափոխությունների և փոխանակման ծրագրերին մասնակցելու ընթացակարգերը և հրապարակել տեղափոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը:	- Տեղափոխությունների և փոխանակման ծրագրերի ընթացակարգերի բարելավում:	Տեղափոխությունների և փոխանակման ծրագրերի արդյունքների թափանցիկության ապահովում:	2011 թ. մայիս ԵՊՀ ռեկտորատ:
10.	Ուժեղացնել վերահսկողությունը համալսարանից ուսանողների հեռացումների նկատմամբ:	- Լուծարքային քննությունների և հեռացումների գործընթացի հստակեցում: - Պարտքերի մարման (լուծարքի) շրջանները մինչև երեքի հասցնելուն ուղղված աշխատանքների իրականացում:	Ուսումնական գործընթացի թափանցիկություն:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ:
11.	Բարձրացնել համալսարանի կողմից մատուցվող ծառայություններով հետաքրքրված անձանց շրջանում ներհամալսարանական հարցերի վերաբերյալ	- Կրթական գործընթացների լայն լուսաբանում (ԵՊՀ պաշտոնաթերթ, ԵՊՀ կայքէջ): - Տեղեկատվական փաթեթների հրատարակում: - Ուսանողների իրավունքների և	Ներհամալսարանական մի շարք գործընթացներ առավել թափանցիկ ու հրապարակային դարձնելը, տեղեկատվության տարածման և տրամադրման գործուն մեխանիզմների ընդունումը:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ ՈԻԽ:

	իրագրվածության մակարդակը, ապահովել ներհամալսարանական կյանքը կանոնակարգող բոլոր փաստաթղթերի (կարգեր, կանոնակարգեր և այլն) մատչելիությունը:	պարտականությունների իրագրվածության մակարդակի բարձրացում:		
12.	Կանոնակարգել գնումների գործընթացը:	- Գնումների գործընթացի նկատմամբ ռեկտորատի հսկողության ուժեղացում:	Գնումների գործընթացի թափանցիկության ապահովում:	2011 թ. ԵՊՀ ռեկտորատ:
13.	Կանոնակարգել ուսանողների դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման և համապատասխան գրավոր պատասխանի տրամադրման գործընթացը:	- Դեկանատների և ամբիոնների աշխատողների պատասխանատվության բարձրացում: - Դիմում-բողոքների և առաջարկությունների քննարկման կանոնակարգի ընդունում: - ԵՊՀ ռեկտորատի անդամների ընդունելությունների գրաֆիկի կազմակերպում: - ԵՊՀ կայքէջի և ներքին ցանցի կատարելագործում:	Դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման արդյունավետ համակարգի ստեղծում:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ ՈԻԽ:
14.	Կատարելագործել համալսարանում աշխատանքի ընդունման գործընթացը և ապահովել դրա թափանցիկությունը:	- ԵՊՀ-ում կադրերի ընտրության գործընթացի կատարելագործում, բաց մրցույթի ապահովում և որակյալ մասնագետների ընտրության համար նպաստավոր պայմանների ստեղծում:	Աշխատանքի ընդունել առավել որակյալ կադրերի:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ արհկոմիտե:

15.	<p>Կատարելագործել ԵՊՀ-ում կադրերի ընտրության, նշանակման, պաշտոնեական առաջխաղացման, ատեստավորման և աշխատանքային հարաբերությունների գործընթացը:</p>	<ul style="list-style-type: none"> - Կադրերի ընտրության մրցութային գործընթացի կատարելագործում: - Մասնագիտական մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծում: - Կադրերի ընտրության, նշանակման և պաշտոնեական առաջխաղացման հստակ մեխանիզմների և ընթացակարգերի ներդրում: - ԵՊՀ աշխատողների համար պաշտոնի նկարագրության և վարքագծի միասնական կանոնների սահմանում: - Շահերի բախման հայտարարագրերի կիրառման կարգի սահմանում: - Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի պաշտոնների տեղակալման ընտրությունների կանոնակարգում համապատասխան փոփոխությունների կատարում, մրցույթների անցկացման ժամանակ դասախոսների անձնային և բարոյահոգեբանական հատկանիշների կարևորում: 	<p>Որակի վրա հիմնված կադրային քաղաքականության իրականացում և սահուն սերնդափոխության ապահովում:</p>	<p>2012 թ. մայիս</p> <p>ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ արհկոմիտե, ԵՊՀ դեկանատներ, ամբիոններ:</p>
16.	<p>Իրականացնել հակակոռուպցիոն միջոցառումների համալիր</p>	<p>- Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրությունների</p>	<p>Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:</p>	<p>2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ արհկոմիտե,</p>

	ծրագրի մշտական մոնիթորինգ և ապահովել ծրագրի շարունակականությունը:	իրականացում, դրանց արդյունքների վերլուծություն և հրապարակում:		ԵՊՀ ՈԻԽ;
17.	Խթանել համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ծրագրերում ուսանողական կառույցների ներգրավումը:	- Ուսանողական ինքնակառավարման խթանում և սովորողների մասնակցություն հակակոռուպցիոն ծրագրերում: - Ուսուցողական դասընթացների կազմակերպում: - ՈԻԽ-ի կողմից իրականացված հարցումների և ուսումնասիրությունների արդյունքների հրապարակում:	Հակակոռուպցիոն պայքարում ուսանողների մասնակցության ապահովում:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ, ԵՊՀ ՈԻԽ, ՈԻԳԸ:
18.	Բարձրացնել համալսարանի ֆինանսական կառավարման արդյունավետությունը:	- ԵՊՀ-ի կողմից լրացուցիչ վճարովի ծառայությունների մատուցման շրջանակի և գնի սահմանման հստակեցում և կանոնակարգում: Աշխատանքի վարձատրության հետ կապված խնդիրների լուծման ընթացակարգերի կատարելագործում:	Ֆինանսական կառավարման թափանցիկության բարձրացում:	2011-2012 թթ. ԵՊՀ ռեկտորատ:
19.	Բարձրացնել համալսարանի աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակը:	- Դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմի զարգացում՝ ըստ գործունեության արդյունքների, աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման մակարդակի:	ԵՊՀ աշխատողների համար բարենպաստ կենսամակարդակի ապահովում:	2011թ. ...